



894.35

6004

9-55 264quid ne

Unsurin.

302.









# ԶԵՆԶԱՆՆ ՊԻ ԱՍՄԱՆՆ

Հ Է Ք Ե Ա Թ

---

Պարսկերէնի եւ Թուրքերէնի բնագիրներէց համեմատութեամբ փոխադրեց

Ս Մ Ա.

---

Թ Ո Ւ Ր Ք Ե Ր Է Ն Ե Ր Ք Ե Ր Ի Բ Ն Ա Ք Ր Ո Վ  
եւ

ՀԱՅԵՐԷՆ ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՈՎ

---

Ե Ր Վ Ե Ր Ն ա զ ա տ Է Ն Թ ա Ր Վ մ ա ն ւ ա ծ

---

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

---

Ա Ն Է Ք Ս Ա Ն Ք Ր Ո Պ Ո Ւ

Տպարան Ա. Մ. Մալխասեանցի

ԹԶԺԴ





# ԶԵՆՋԱՆՆ ՊԻ ԱՍՄԱՆՆ

Հ Է Ք Ե Ա Թ

---

Պարսկերէնի եւ Թուրքերէնի բնագիրներէց համեմատաբար փոխադրեց

Ս Ս Ս.

---

Թ Ո Ւ Ր Ք Ե Ր Է Ն Ե Ր Գ Ե Ր Ի Բ Ն Ա Գ Ր Ո Վ  
եւ

ՀԱՅԵՐԵՆ ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՈՎ

---

Ե Ր Գ Ե Ր Ն ա զ ա տ ե ն Թ ա Ր Գ մ ա ն ւ ա ծ

---

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

---



Ա Ն Է Ք Ս Ս Ն Դ Ր Ո Պ Պ Ո Ղ .

Տպարան Ա. Մ. Մալխասեանցի

ՌԶԺԴ



THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

PHYSICS DEPARTMENT

1911

RECEIVED

APR 11 1911

FROM THE PHYSICS DEPARTMENT

CHICAGO, ILL.

1911

THE UNIVERSITY OF CHICAGO  
LIBRARY

Իրենց վարքով էլ Ղուկէյլին ու Նաթանը սիրելի էին նոյնպէս երկրի ազգաբնակութեան, որոնց գոնէ արտաքին յարգանքն ու համակրութիւնն էին վայելում: Այսպէս երկար ժամանակ դարձութիւնների մէջ կեանքերը մաշելով, մի օր յանկարծ զգացին, որ իրենք այնորեւէ են: Աշխարհի վրայ ինչպէս ամեն մահկանացուի բաժինն է ցան ու վիշտը, բիւրաւոր բարիքների մէջ ապրողներից էլ անբաժան է հոգեկան տանջանքն ու տառապանքը, այդպէս էլ իշխանն ու քէհան իրենց սքտի խորքում կրծող ունէին, որ նրանց հանգիստը, խռովում, միշտ զգաստացնում և յիշեցնում էր, թէ իրենք էլ ապերջանիկ ու թշուառ են: Այս ահաւոր հարստութեան, գանձերին, պալատներին, պարտէզներին ու հասոյթներին տիրելու, կառավարելու և վայելու ժառանգ չունէին երկուսն էլ:

Այլևս չը կարողանալով ներքին վշտի մրմուռներին դիմանալ, իշխանը իր թորերը մաշող վիշտը աստիճանաբար պարզեց իր քեհային, որպէսզի խօսելով, Եիրքին ցաւերը դուրս թափելով գոնէ կարողանայ սփոփւել: Յաճախ Ղուկէյլի իշխանը իր խորհրդակցին, վշտակցին կանչում էր պալատ իր վիշտն էր յայտնում ու կրկնում.

— Քէհա, ոչ մի կարիք չունենք, վիճակներս լաւ հարստութիւններս անբաւ, բայց ոչ ժառանգ չունենք, ինչ վերջ պիտի ունենայ մեր կեանքը:

— Իշխան, ասաց մի օր Նաթանը, արի միասին ճանապարհորդենք, անշուշտ մի բարի պատահար կ'ունենանք մեր ցաւին ճար կըլինի:

Այս խօսքի վրայ Ղուկէյլին ու Նաթանը իրար ձեռք բռնած պալատից դուրս եկան, ման գալով գնացին գետափ հասան: Աղօթարանը բացւելուն մօտ էր, երեսները դէպի կենսաբաշխ արեւը դարձրին, աղերս ու խնդրածք արին: Երբ հոգով վերացած յափշտակութեան մէջ էին





## ԶԷՆԶԱՆՆ ՈՒ ԱՍՄԱՆՆ

### ՀԷՔԵԱԹ

Երևակայողների կարծիքով, պատմողների ակնարկով, հովերի ազդեցութեամբ ենթադրում են, որ հնումը Երիգա այժմ Երզնգան քաղաքում ապրում էր Ղուլէյլի անունով մի իշխան: Սա մի իմաստուն Քեհա (պալատի վերատեսուչ) ունէր Նաթան անունով, որի հետ ամբողջ կեանքը անցկացրեց մեծ հրճանքով և անվերջ զւարճութիւններով: Սրանց ընթացքը համերկրացիների արմանքի, գալմանքի ու նախանձի պատճառ էր դարձել: Ամեն մարդ էլ նրանց վայելած կեանքը ձեռք բերելու, վարելու տենչով էր տոչորւում: Իշխանն ու Քեհան անշափ կայրի ու գոյքի տէր էին, մեծամեծ ազարակներ ու անտուններ ունէին, որոնց մէջ անվերջ զւարճանում էին և ուրախ մըթնացնում իրենց օրերը: Ո՛չ միայն ոչխարի կովի, այժի ու խոզի հոտեր, ձիու, ջորու ջոկեր ունէին, այլ յատկապէս անտառներում երէներ, եղջերուներ, այծեամբներ, արջեր, գայլեր և ուրիշ գազաններ էին աճեցնում, որպէսզի ազատ որսան և օրերը տխուր չը մթնացնեն: Անտառներում բազմազան ծառեր էին աճեցնում, որպէսզի անուշահոտ փայտեր կտրեն թէ այրելու և թէ շէնքի ատաղձի համար:



հան, յանկարծ հեռուից նկատեցին գեղանի մերկ Ջրկոյսին, մագերը թիկունքին ու կուրծքին թափած, արևի նախնական ճառագայթների տակ ցոլալով ու փայլելով վար էր իջնում լողալով, ձեռքին բռնած կարմիր նուռը։ Խսկոյն ջուրը մտան, ստացան յաւերժական կոյսից նուռը, մեծ հրճւանքով մատաղը բաժնեցին արեւագալին հասնող ուխտաւորներին և իջինք վերագարձան պալատ։

Որդեկարօտները ալևորի պատգամն իսկութեամբ կատարեցին։ Խսկապէս մի ամիս չանցած տիկինները յղիացան։ Ինն ամիս, ինն օր և ինն ժամը լրանալուց յետոյ երկուսն էլ ազատուցան և երկու ուրախառիթ զաւակ լոյս աշխարհ բերին, իրենց ամուսինների հոգեկան մեծ ուրախութեան և հրճւանքի ժամին յանկարծ պալատում յայտնուեցաւ Ալեորը, զրկեց իշխանի աղջկան և անունը Զէնչան դրեց, իսկ քեհայի տղային զրկելով Սաման կանչեց։ Այս պաշտօնական անւանակոչութիւնը կատարելուց յետոյ, նորից կրկնեց ալևորը, որ մանուկները արփունքի հանելուց յետոյ, անշուշտ իրար հետ ամուսնացնեն։ Ապա ծնողներից խոստում առաւ ու նորից անհետացաւ։

Հրաշքի յետգարները (եազիգեաւրները), ծերերի ժառանգները միասին միեւնոյն յարկի տակ մեծացան, քրնքոյշ բողբոջի նման աստիճանաբար զարգացան։ Ինչպէս օրօրոցում իրար ծոցում էին բալուլում նրանց, այնպէս էլ միեւնոյն մահճակալի մէջ էին քննում երբ նրանք երեք չորս տարւան էին։ Միատեսակ շոր էին հագնում, միանման ձեով հագուստ, կապուստ ու գտակ ունէին, միասին էին ճաշում ու ընթրում, իրար եղբայր էին կանչում և իրար հետ էին խաղում օր ու գիշեր։ Երբ արդէն իրենք իրենց պարտէզ էին իջնում խաղալու, սաղարթախիտ ծառերի տակ զբօսնելու և վազվզելու, ծնողները որոշեցին նրանց դպրոց ուղարկել, որպէսզի վարժապետը նրանց



մտքերը մշակէ և ընդարձակէ: Այդտեղ վարժապետի խրատներով և յորդորներով կըթւեցան, գրել կարգալ սովորեցան, թւելու և հաշւելու վարժեցան, մարդեցին իրենց բազուկները, ոսկորները վազվզելով, թռչկոտելով և հոգին վսեմ մտքերով: Օրից օր մանուկները իրենց սովորած առակներով, օրինակներով ու պատմութիւններով աղնւացան, ճաշակով նրբացան ու վեհացան:

Օրերն իրար յետեից սահեցան ու զլորեցան, ամիսներ ու տարիներ անցան, երեխաները գիտութիւնով գինւեցան, զարգացան, պատանի ու խելահաս դարձան: Ընչափ իրար նման էին Ասմանն ու Զէնջանն, ինչպէս միևնոյն նուան հատեր և այնպիսի գեղեցիկ տիպարներ էին գէմքով ու կազմով, որ հըճւանք էին պատճառում ոչ միայն դպրոցի ընկերակիցներին, այլ բոլոր պատահողներին: Մանկական ու պատանեկան համակրութիւնն ու իրար մասին տածած քաղցր ցանկութիւնը աստիճանաբար դարգանալով, վերջապէս բուռն սիրոյ փոխարկեց:

Մի օր Զէնջանի մայրը խօսակցութեան մէջ մերկնաբար ասաց. — Աղջիկս ոչ միայն համակրում է Ասմանին, այլ կուռքի նման պաշտում է:

Թէև դեռ այդ միջոցին տղայի շոր էր հագցնում Զէնջանը, բայց վաղ զգացել էր, որ ինքը տղայ չէր Ասմանի նման և ինչ որ տարբեր կազմ ունէր իր եղբայրը: Մանաւանդ նա արգէն ըմբռնել էր, որ Ասմանը Նաթանի, իսկ ինքը Ղուկէյրի գաւաին էր և հարազատներ չէին: Ինչպէս յայտնի է էգերը աւելի շուտ են զարգանում և նրանց զգացումները աւելի վաղ է բորբոքում քան թէ արուներինը: Ուստի մի օր դպրոցի ճանապարհին մի անմարդի փողոցում Զէնջանը գրկեց Ասմանի գլուխը, փաթաթեց և տար-տար համբոյրներ խլեց նրա շրթունքներից: Այնքան մեծ հաճոյք զգաց Ասմանը այդ ջերմ համ-



բոյրներէից, որ նրանից յետոյ շարունակաբար այդ համբոյրները կրկնուում էին նպաստաւոր պարագաներին: Սիւր մի վնուկ պառաւ այդ բանը նկատելով իշխանուհուն լուր տարաւ, զգաստացրեց, որ զսպէ դեռահասներին: Իշխանուհին այնպիսի փոթորիկ բարձրացրեց պալատում, այնքան ճնշեց իշխանին, որ վերջինս մօտեցաւ իր վաղեմի բարեկամին և ասաց:

— Առ այդ սրիկայ որդուդ և դուրս գնա՛ պալատից, այլեւ բեզ չեմ կարող պահել արքունիքում:

Նախանի խնդիրն ու աղերսը ներգործութիւն չունեցաւ, նա դուրս եկաւ թէ պալատից, պաշտօնից ու դիրքից և թէ դատապարտեց իր միակ որդու տանջանքներին ականատես դառնալու: Մի ժամանակ այս վիշտը կրելուց յետոյ, երբ լսեց, որ Զէնչանն էլ տառապում է Ասմանի նման սիրոյ տապով, Նախանը գնաց ապարանք և յիշեցրեց իշխանին ալեոր բուրմի պատէրը: Բայց իշխանը զանազան պատճառաբանութիւններով նրան քնացրեց:

Սակայն Զէնչան հանգիստ չէր տալիս ոչ հօրը և ոչ մօրը, նա անվերջ պահանջում էր իր եղբօրը՝ Ասմանի հետ ազատ տեսակցել: Օրիորդին խաբխիւում էին այսօր, վաղը, ուրբաթ-շաբաթ առարկելով և նորան տանջում: Վերջապէս իմաստուն Նախանը մի օր մտաւ նորից արքունիք առանձնութեան մէջ բռնեց իշխանին, երկար խօսեցաւ, համոզեց և աւելացրեց:

— Տէրս, ես պարտաւորեաժ եմ ձեզ յիշեցնելու, որ բուրմին մեր տւած խոստման և նրա մեզ յայտնած պատգամի ժամանակը լրացել է: Այս բնութեան Արեահօր և Զրմօր պահանջն է, պէտք է կատարի, որ նրանք թշուառութեան չը մատնւին: Պէտք է օր առաջ ամուսնացնել դեռահասներին, նրանց հրճանքը տեսնել և միխիթարել:



Ձեզ ձեր պարտքը և ուխտը յիշեցնելով, ես իմ պարտքս եմ կատարում, եթէ նորից յամառիք և մենք խոր վշտի ու տառապի մատնենք, ես մեղքիցս ազատւում եմ, թողնում եմ պատասխանատուութիւնը ձեզ վրայ:

— Սպասի՛ր, ասաց իշխանը, քէհա՛, զնամ կնոջս մօտ և քեզ պատասխան բերեմ, ու մտաւ իշխանունո՛ւ առանձնարանը: Իշխանունուն առանձին գտաւ և ասաց:

— Տիկին, ալիորի պատգամի համաձայն, Նաթանն եկել և Ձէնջանին իր որդու՝ Ասմանի համար կին է ուզում: Դրան ինչ ենք պատասխանելու, քանի որ ուխտել ենք քրքրմի առաջարկով:

— Դատարկ խօսքերով ականջներս մի՛ յոգնեցնէք, ասաց իշխանունին, դուք ձգտեցէք աղջկանս տալ Հանձիթի, Ծոփի, կամ Մալաթի իշխաններից մէկի որդուն: Ինչ յարմարութիւն կայ աղջկանս դռանդ ծառայի որդուն կնութեան տալու:

— Ես էլ չեմ կարողանում հաշտել այդ մտքի հետ, ասաց իշխանը, բայց քրմի պատգամը, աղջկանս սէրն ու ձգտումը.....

— Ես քու գլուխը կը փշրեմ, անճարակ թուլամորթ, ասաց իշխանունին, մի քանի հարւած տալով ծերուկի գլխին ու կրծքին, որը թողեց ու դուրս փախաւ:

Երբ հեւալով ու շփոթւած դուրս եկաւ զառամեալ իշխանը և նկատեց Նաթանին, ասաց.

— Այս խնդրի առթիւ այլևս ոչ մի խօսք չեմ ուզում լսել բու շրթունքից: Գնա հեռացիր, քանի կնոջս ճանկը չես ընկել:

Դրանից յետոյ իշխանունին միջոցներ ձեռք առաւ, որ այլևս դեռահասները իրար չը պատահին, որով թշուառ մանուկներն սկսեցին գիշեր-ցերեկ հառաչել ու սգալ: Չը դիմացաւ Նաթանը, մահն աչքն առած նորից դիմեց իշ-



խանին, բայց Ղուկէյին երբ լսեց նրա խնդիրը, սուրբ քաշեց, վրայ պրծաւ, որ սպանի իր հին բարեկամին և թշուառ հայրը հազիւ գլուխն ազատեց այդ սոսկալի վտանգից։

Ասմանը զգալով որ նպատակին չը պիտի հասնի, հիւանդի նման սկսեց հիւժուել, մաշուել և թախիժի մէջ ընկզմած գիշեր-ցերեկ մտածել, թէ ինչ հնարով հասնի մուրազին։ Նա շարունակ երազում էր, թէ քառասուն մանուկները, կամ եօթը սրբերը, երեակ ոյժերը իրեն ու Ջէնջանին տանում էին տաճարի բակի նահատակների, հանգստաբանները, իրար միացնում, իրար դէմքերը ցոյց տալիս, ոսկէ սափորով զինի էին խմացնում և իրենց սիրոյ կրակը բորբոքում էին։ Մի օր էլ պատանին զարթնեց և սկսեց խելագարի նման լալ։ Թշուառ հայրը սկսեց իր ծնկները, կուրծքը ծեծել, ուզեց բժիշկ հրաւիրել, որ արին առնէ, որպէս զի զաւակը փրկւի, չը խելագարւի իր սիրեկանի պատճառով։

Վշտաբեկ պատանին այլևս չը կարողանալով յաճախել այն դպրոցը, որտեղ տարիներով իրար հետ ապրել ու պաշտուել էին սիրահարները, գնաց հասարակական այգու գինետունը և գուսանների մօտ աշկերտ մտաւ։ Այստեղ երբ լսում էր երգերի քաղցր եղանակները, վսեմ խօսքերը, սիրոյ պաշտամունքն ու գովքը և սիրտ մորմոքող մտքերը, այրւում ու բռնկում էր աւելի սաստիկ մրմուռներով։ Խեղճ պատանու աչքի առաջից երբէք չէր հեռանում Ջէնջանի տխուր պատկերը, թէքւած բարձր վիզը, արտասուալի մեծ մեծ աչքերը և բոցակէզ այտերը։ Անվերջ նրա ականջներին բաղխւում էին սիրեկանի հառաչները, ողբի ձայները և տրտունջի մրմունջները։ Մի գիշեր Ասմանը երազում լուսացրել էր այն արևորի հետ, որի մասին շատ էր լսել ծնողներից։ Երազում արևորը մօտեցաւ պատանուն և ասաց։



— Դու մի յուսահատիր, սպասիր բառասուն օր և մուրազիդ կը հասնիս: Առ այս սիրոյ բաժակը և խմիր Աստղիկի կենացը, որ քու մուրազդ տայ:

Ասմանը խմեց և ալևորը բաժակի մնացորդը ձեռքին իսկոյն աներևոյթացաւ: Ապա Ասմանը երազում տեսաւ, թէ ինչպէս ալևորը այդ մնացորդ նեկտարը տւեց Ջէնջանին խմելու: Այս երազներն այնպէս էին յուզել ու փոթորկել պատանիին, որովհետեւ առաւօտ Նաթանն եկաւ տեսաւ, որ որդին շատ երկար է քնել և նրա բերան ու դունչը փրփրակալել է: Իսկոյն ձայն տւեց որդուն ու ասաց.

— Ի՞նչ ես քնել ու մնացել, վարպետներդ բեզ են սպասում:

Ասմանն անմիջապէս վերկացաւ, գնաց զինետուն, վարպետները զայրացան նրա վրայ, նախատեցին, թէ ինչի էր ուշացել: Մակայն պատանու լշտատիպ գէմբը գններով իսկոյն լռեցին և առաջարկեցին իրենց այս ու այն ծառայութիւնները կատարել: Ասմանը առանց հոգեկան տանջանքների չը կարողանալով ծառայել վարպետների բմհաճոյքներին, յուզւած, վշտի դառն ճնշումից սիրտն ազատելու, հոգին խաղաղելու համար խնդրեց, որ իրեն քնար տան մի բան նւագելու:

Երբ քնարը ձեռքն առաւ, այնպէս էր հարում կտրնտոցը լարերին, որ քնարի ձայնը զորդացնում ու ցնցում էր ունկնդիրների սիրտն ու հոգին: Ներզաշնակ եղանակներն այնպէս տարածւեցան զինետան ահաւոր սրահում, որ իրենց ձգեցին ունկնդիրների ուշքն ու միտքը, ապուշ կրթելով իր վարպետներին:

— Տղա, ասաց գուսանապետը, երեք օրում դու չէիր կարող այդքան բան սովորել, այստեղ հրաշք է կատարւել: Երկու օր առաջ քնարի լարերի կապերի տեղը չը գի-



տէիր, այսօր քնարը խաղում է մատներիդ մէջ: Աստ տեսնեմ,  
կարո՞ղ ես ինքնաբուղիս ոգել (եղանակ հնարել) ու երգել:

Այլեւս պատանին չը կարողանալով խոր վիշտը տա-  
նել, դառն մտքերը, հոգին ճնշող ցաւերը ցրւելու համար  
քնարի լարերին խփեց և հետեւեալ հանգերը երգեց:

Ինձ բուժելու էլ մի կանչէք Լոխմանին,  
Վերբս խորն է, չի երեւիլ ամենին,  
Ես անձնատուր եղայ սիրոյ կրակին.  
Գարնան հեղեղի պէս արցունքս հոսեցին:

Ողջունեցի, արժանացայ ես ժպտին,  
Ողբակից գտայ հոգւոյս խոր վշտին.  
Նոյն սափորից մեզ խմացրին հին գինին.  
Խմեցի լիք բաժակ, սիրով հարբեցի:

Սիրահարն է ողբում իր սիրեկանին,  
Քանի որ խմել է սիրոյ նուրբ գինին,  
Հոգիս ասաց,—Կարդա հանգերից վերին,  
Բացի սիրոյ գիրքը, խօսքը կենդանին...

Սիրոյ գովքը երգում է Ասմանը թշւառ,  
Առանց ծխի թոքս է վառւում անդադար,  
Սրտիս ցաւից ողբս բռնեց ողջ աշխարհ,  
Սպասում եմ դատաւորիս դատն: արդար:

#### Թորքերէն

Իսթէմէմ թաբիբի, Լոխման բուլունգի,  
Քէնդի եարալարըմ դէլդի, նէ գէրսին.  
Աշգ աթաշընա իւմմանէ դիւշդըմ,  
Բահար սէլի բիբի ջօշդըմ, նէ գէրսին:

Սէլամ վերդիմ, սէլամումի ալդիլար,  
Ղալբըմզաքի մուրադիմի բիլդիլար,  
Իիր գաղէհդէն արի հայեաթ վերդիլար,  
Ազգըն տօլուսընը իշդիմ, նէ՞ գէրսին:

Աշըզլար փիրընի էօյէր շայէթգան,  
Իշէր աշգ տօլուսուընը արու հայաթգան,  
Իէլիմ սէօյադի, ընդ, օգու ալաթգան,  
Աշըզըն քիթաբընը աշղըմ, նէ՞ գէրսին:

Սէֆիլ Ասաման էյլէր փիրըն մէհթինի,  
Եանար ջիգեարըմ, չըգմազ թիւթիւնի,  
Հէսաբ իթդիմ եէրին, գէօյին Ղաթինի,  
Հազըն հիքմէթինէ շաշղըմ, նէ՞ գէրսին:

Այս երգը զարմացած լսեցին գուսանները և Ասամանին բնածին բանաստեղծ յայտարարեցին, որը տեղից բարձրացաւ, վարպետներին ապշանքի մատնած, տուն վերադարձաւ:

Այդ օրը Զէնչանն էլ նոյնպէս շատ էր քնել: Նա-  
ժիշտները մօտեցան նորա անկողնին և ինչ տեսնեն,— բե-  
րան ու կգակ փրփրակալած: Շւարեցին, մօրն իմացրին,  
զարթեցրին ու հարցրին.

— Օրիորդ, քեզ ի՞նչ պատահեց:

Մայրը մօտեցաւ, համբուրեց ու ասաց:

— Աղջիկս, քեզ ի՞նչ պատահեց:

— Սիրոյ կրակի բաժակն ինձ խմացրեց ձեր պատ-  
մած ալիօրը, ասաց օրիորդը, եթէ չէք հաւատում, ձեզ  
համոզուելու համար երեք չորս բառեակ բանաստեղծութիւն  
ոգեմ ու նւագեմ: Կնայէք ու նոր շինել տւած բամբուս  
բերեք:



Անմիջապէս ցանկացած բամբիւր տւին, Վերցրեց  
վշտարէկ կոյսը, լսեցէ՛ք, թէ ինչ նւագեց սիրոյ հրով ներ-  
շնչած օրիորդը:

Այս գիշեր երազում դարձայ խելագար,  
Ճամբայ ընկայ դէպի բառասնի աշխարհ.  
Հասայ, ձեռներս կրծքիս շարած կանգնեցայ,  
Խմցրին ինձ բաժակ, լիք բաժակ նեկտար:

Ինձնից ողջոյն տարէք նագենի եարին,  
Միթէ ես կարո՞ղ եմ տոկալ այս ցաւին.  
Դեռ ծաղկահաս ես ծառայեմ բամբիւրին,  
Երգիչների վարդըս վառւած բոցերին....

Թորքերէն

Դիւն գիջէ սէյիւրդէ օլդըմ դիվանէ,  
Վարդըղըմ բըբլարըն եօլի դըր, եօլի,  
Էլի բալլի դուրդըմ անդէ դիվանէ,  
Սունդիւար բիր գաչ դօլի դըր, Կօլի:

Բէնդէն սէլամ իդին նազլի եարըմա,  
Ջանլար տայանը մի՞ ահու գարըմա,  
Գէնջ եաշըմդա խղմէթ իդէմ փիւրըմա,  
Ձէնջան աշգլարըն փիւրի դըր, փերի:

Եսաց ու լոեց: Հայրը մտածեց, ապշած չորս բոլորը  
նայեց ու ասաց:

— Սպրիս աղջիկս: Եթէ մի գուսան ներկայանայ քըն-  
նութեան, կարո՞ղ ես մրցել:

— Գուսանները չեն համարձակւիլ ինձ հետ մրցման

դուրս գալ, բանաստեղծների դէմ կարող եմ ողբել ու ասել:

Ասմանը վշտաբէկ թափառական էր դարձել և շրջում էր յաճախ պալատի այգիներում և պարտէզներում: Մի օր Ձէնջանը նորան տեսաւ ասպարանքի բարձր լուսամուտից և չը կարողանալով զգացումները սանձել, դիմեց հօրը բամբէռը ձեռքին հետևեալ քառեակը երգելով:

Հայրիկ, միթէ սրտիս վերքը չե՞ս տեսնում,  
Որոնիր ու գտիր մի հմուտ դեղտուր,  
Միթէ Տէրն էր վճռել հոգուս անջատում,  
Որ ես սիրուս գրկեմ միայն երագում:

Հայրիկ, վարիր երկրիդ դէկը ամբողջ դար.  
Արարչից խնդրել եմ, նաւըդ առաջ տար.  
Միայն սիրահարիցս ինձ մի բաժնել տալ,  
Ես վանդակից նրան տեսայ վշտահար:

Աշխարհ բռնեց հառաչս ու ողբ անդադար,  
Տես, ոստի մ' է թառել խղճուկ սիրահարս,  
Կեանքս զոհ եմ դրել ես նրա համար  
Նրա մէջ եմ տեսնում կեանք, արև, աշխարհ:

Կեցցես, իշխան հայր, դո՛ւ կեցցես յաւիտեան,  
Ճակատագիր չի ջնջւիլ յաւիտեան,  
Մի բորբոքիլ սրտիս կրակ, թո՛ղ թռչեմ,  
Փարւանի պէս խանձեմ, չորնամ յաւիտեան:

Թոռքերէն

Բիլիրմիսի՞ն, բաբա, դէրդիմի մէնիմ,  
Արադըմ փէրիմի, բուլղըմ գէչէն գիւն,



Բէօյլէ իմիշ բանա հագգըն ֆէրմանի,  
Փիրլէր իլէ դէվրան սիւրղըմ գէչէն գիւն:

Դէօվլաթինդա, բաբա, սիւրէսին դէմի,  
Մէվլայա էմանէթ էյլէղիմ սէնի,  
Սէվդիյիմդան ջիւդա գիւշիւրմէ մէնի,  
Ղաֆէսիմդան եարի գէօրղուլմ գէչէն գիւն:

Շու ալէմի ալդի ահ իլէ զարըմ,  
Արշա տայանմիշդը բէնիմ ֆէհրաղըմ,  
Ուղուրընա ֆէդա դըր բու դարիբ ջանըմ,  
Շիւքիւր միւրաղըմա էրդիմ գէչէն գիւն:

Եաշա սէն, բէյ բաբա, սէն բինլար եաշա,  
Եաղընլար գէալիբ թալէհսիզ բաշա.  
Սէօյլաթմա, Զէնջանըն եանսըն աթաշա,  
Փէրվանա դէք եանղըմ նարա գէնչէն գիւն:

Հայրն դգաց, որ Ասմանը օրիորդի ապարանքի շուրջըն է ման գալիս, աղջկան իր սիրով այրում, խանձում է, սաստիկ զայրացաւ և հրամայեց:

— Ով որ այդ ստահակ ու յանդուգն տղային պատահի, սպանէ և նրա արիւնոտ շապիկը ինձ ներկայացնէ, աղջիկս նրան կնութեան կը տամ:

Ապա զգուշութեան համար նորընտիր քէհային հրամայեց, որ պատրաստութիւն տեսնի, աղջիկը վերցնեն և տնով տեղով, մի քանի ամսով ամառանոց գնան, բանի որ արդէն վարունն էլ հասել էր:

Այդ օրերը Ասմանի սիրտը սաստիկ նեղանալով, գրեթէ ձեռք բաշած, գնաց մտաւ իշխանի այգին և իր սրբեկանին գտաւ ու ասաց.

— Ե՛կ, համբուրւենք, ինձ թոյլ տուր, որ գնամ պանդխտութեան:

— Ինչ<sup>օ</sup>ի ես պանդխտում, ասաց զայրացած Զէնջանը:

— Վէց-եօթն օրով ինձ թոյլ տուր պանդխտելու, շուտով կը վերադառնամ: Համրած օրը շուտ կը լրանայ, ապա՞ծ ե համբուրելով սիրեկանի շրթունքներն ու աչքերը վերադարձաւ իրեն հօր մօտ: Երբ տուն մտաւ, ներկայացաւ հօրն ու ասաց.

— Հայրիկ, քեզնից թոյլտութիւն եմ խնդրում:

Ապա քնարը վերցրեց, լսենք, տեսնենք ինչ երգեց:

Լսիր, հայրիկ, սրտիս խորհուրդ պարզ, յայտնի,  
Իրաւունք տո՛ւր բռնեմ մահակ պանդխտի,  
Ինձ մի՛ այրիւ այս կրակում ընտանի,  
Տուր քնարըս, հայրիկ, ընկնեմ ես ուղի:

Զէնջանն անցաւ, չը գնայի ողջերթի,

Մխիթարել, նա էլ հեկաւ, վշտալին.

Այսօր հիւր եմ ես էլ յարկում հայրենի,

Հայրիկ, տուր ինձ քնարս, ընկնեմ ես ուղի:

Մայրիկ, մի՛ արտասուիլ, բաւ է, դու մի՛ լալ.

Վերքոտ սիրտս սիրոյ տէգին դէմ մի՛ տալ,

Ես ճամբորդ եմ ինձ իմ ուղուց ետ մի՛ առ,

Մայրիկ, տո՛ւր ինձ համբոյրդ, ես ընկնեմ ուղի:

Սիրոյ բոցով վառւում է թոքս ու հոգիս,

Լսիր խնդիր, լսիր խօսքը խղճուկիս,

Հալալ արա տւած կաթիդ ու խնամք,

Տո՛ւր ինձ համբոյր, մայրիկ, ես ընկնեմ ուղի:





Առժամանակ պանդուխտ ընկնեմ տար աշխարհ,  
Արտսունք թափեմ հեղեղի պէս անդադար,  
Ձեռքդ մեկնիր, տուր համբուրեմ, թշնո հայր,  
Հոգիս հայրիկ, իրաւունք տուր հեռանամ:

Թարքերեն

Ջանրմ բաբա, դիյնլա մէնիմ սէօզիմի,  
Գէօզիմ բաբա, իզին արմայա գէլդիմ,  
Եագամ արթէշլարա մէնի—էօզիմի,  
Ջանրմ բաբա, իզին արմայա գէլդիմ:

Ձէնջան գէշդի, դուրամաղըմ սէլամա,  
Դիյին գեալսըն, գէօրսըն սէֆիլ անամա,  
Բուգիւն միւսաֆիրըմ քէնդու խանէմա,  
Ջանրմ բաբա, իզին արմայա գեալդիմ:

Սէֆիլ Ասման աշք տօլուսընա եանա,  
Դիյնլէ բէնի, դիյնլէ, էյ դարիբ անա,  
Չօգ սիւղընը էմդիմ, հալալ էթ բանա,  
Ջանրմ անա, իզին արմայա գեալդիմ:

Ասման դոյ բիր գաման դուրբէթ չէքէյիմ,  
Գէօզլարըմդան գանլու եաշար թէօքէյիմ,  
Դուր, գէթուր, բաբա, էլին էօփէյիմ,  
Ջանրմ բաբա, իզին արմայա գէլդիմ:

Ասաց ու կտրեց: Այդ ժամանակն հայրը՝ Նաթանն  
եկաւ, առաց:

— Զաւակս, դու չես կտրող պանդխտել, դեռ չի հասել  
տար երկիր մեկնելուդ ժամանակը:

Բայց Ասմանը չը լսեց ծնողներին, նրանց ձեռքերն համբուրեց, խուրջինը հագար ոսկով լըցրեց, նոր շոր ու սպիտակեղէն դրեց խուրջինի մէջ, բնարը ձիու քամակին կապեց, ճանապարհ ընկաւ դէպի իր սիրեկանը, որը ծնողների հետ ամառանոց էր գնացել: Մինչ շտապում էր Ասմանը, մտրակում էր նժոյգը, որ շուտով հասնի իր ցանկալի սիրեկանին, Ձէնջանը անորոշութեան մէջ տառապում էր ամառանոցում: Նա վիշտը ցրելու համար յաճախ վերցնում էր բամբիւն ու հրդում և հօրը սիրտը բրբրում ու վառում էր:

Փապուս էի եղել գիշերս երազում,  
Բռնել էի դրախտի ուղին — քառասուն,  
Ձեռքերս կրծքիս շարած կեցայ ատեանում,  
Տւին ինձ լիք բաժակ թւով քառասուն:

Սիրահարիս լիճը խորն էր սուզեցի,  
Ալևորս եկել էր այստեղ ինձ այցի,  
Եօթանասուն ցեղ մարդ կանգնել էր սէյրի,  
Ամենքն էլ մոլորւած, ապշած մնացին:

Խմել եմ լիք գինին, հարբած եմ, տկար,  
Բաց արի սիրտս, որ վիշտս կարդար,  
Հանեցի ծիրանիս, սև քուրջս հագայ,  
Թող ամենքն ասեն ինձ գիժ ու խելագար:

Արդեօք բացատրեցին վիշտս հրեշտակիս,  
Թէ սէրն իջաւ երկնից այս թշւառ գլխիս,  
Մանուկ մատաղ ստրկացայ ծերուկիս,  
Ձէնջանն աշդների վարդն է և ծաղիկ....



Թորքերէն

Դիւն գէշէ սէյրիմդէ փէյման օլմուշում,  
Վարդըղըմ քըքլարըն Էօլի դըր, Էօլի,  
Դէսթըմի բաղլաղըմ դիվանայ դուրղըմ,  
Վէրդիլար բարդէի տօլուղըր, տօլի,

Աշգլար գէօլլէրի դէրին դըր իւզէր,  
Փիրիմ բու գիւն բանա էյլէդի նազար,  
Եէթմիշ իքի միլլէթ Հագգ տէյիք գէզար,  
Զիւմլէսի Մէվլանըն դուլու դըր, դուլի:

Իշմիշիմ տօլուի, սէրխօշում դայիմ,  
Աշայըմ դէրդիմի, բէն քիմէ դէյիմ,  
Թօքէիմ ալլարի, գարալար գէյիմ,  
Դօյ դէսինլէր բանա գէլի դըր, գէլի:

Աջաք այան օլղը մէլէք դէրդիմա:,  
Օնուն սէվդասի քէնդու սէրիմա,  
Գէնջ Էաշըմդա խզմէթ իթգիմ փիրըմա,  
Զէնջան աշգլարն գիւլի դըր, գիւլի:

Երբ Ասմունը գէպի իշխանի ամառանոցը ձիաւորւած  
դնում էր, ճանապարհին մտածեց, թէ ամառանոցում ի-  
րան բոլորն էլ ճանաչում են, կը բռնեն ու կտպանեն: Հե-  
ռուն մի հովիւ տեսաւ, որ ոշխար էր արածում: Իսկոյն  
մօտեցաւ խաշնարածին, ձին, սարքը նրան յանձնեց, հա-  
գի հալան հանեց, հովին հագցրեց և հովի ցնցոտիներով  
ծպտած, բնարը ձեռքին դիմեց իշխանի ամառանոցի ա-  
պարանքը:

Դուլէյլի իշխանը իր նոր քէհայի և ուրիշ պաշտօնա-

կալներ ճետ առաւօտ կանուխ լճի ափին նստած խօսակցելիս, յանկարծ նրանց մէջ կանգնեց Ասմանը ձգւած աղեղից քցւած նէտի նման: Ղուէյի իշխանը նրան տեսնելով ասաց.

— Մօտ արի, հովիւ ի՞նչ ես ուզում:

Խեղճ Ասմանը հովւի քայլերով առաջ գնաց, ձեռքը քնարին դրած:

— Տղան, ասաց իշխանը նւագել զիտես:

— Հրամմերէք, իշխան, քիչ ու միչ կարող եմ նւագել...

— Թէ գիտես, մի քանի քառեակ երգիր, ասաց իշխանը:

— Աչքիս ու գլխիս վրայ, ասաց Ասմանն, քնարը ձեռքն առաւ, քոքեց ըւ այս երգը ոգեց ու երգեց.

Սիրահարւեցայ ես ճրագիս վրայ,

Նրա կայծ ու բոցից խիստ բռնկեցայ,

Դէմքի լսի ցոլքին շատ կարօտեցայ,

Ախ՛ մէկ գտնեմ, գրկեմ կորցրած եարիս:

Մագերին կապել է ոսկեթել մազթուկ,

Հալեց, մաշեց խղճիս թէ սիրտն ու թէ թոք,

Որոնում եմ անվերջ գոնէ, հետքն ու շուք,

Գուցէ հասնիմ կեանքում կենսատու եարիս:

Մայլել եմ սոխակիս գրաւիչ ձայնին,

Զգտում եմ հասնելու իմ կոկոն վարդին,

Կսկում գալարւիմ ես բարալիկ մէջքին,

Ստորուկ դարձայ պաշտած թագուհի եարին:

Զիտեմ անունն ու տոհմ հրճւանքով չայտնեմ,

Արգելքները ջնջեմ, փշրեմ ու այրեմ,

Հաւատարիմ հոգուն վիճակ բացատրեմ,

Սիրտս բանամ, վիշտս պատմեմ իմ եարիս:



Թորհրդ

Բէնդէ ջանանա գէօնիւլ զիւշիւրդըմ,  
Զիա վերիւր չէվրէ եանա սէվդիյիմ,  
Ջէմալի գէօրմէյէ արդուլար գէօնիւլ,  
Սարաբիլսէմ սէնի ջանա, սէվդիյիմ:

Սօմ սրմատան օլսուն զիւլֆունուն բաղի,  
Էրիտի գալմատի իւրէյիմ եաղի,  
Արայա արայա բոլղըմ օթաղի,  
Բէնդէ գեալղըմ բու մէյգանա, սէվդիյիմ,

Մայիլ օլղըմ բիւբիւլ քիբի զիլինա,  
Էլ ուզադաբիլսէմ զօնչէ գիւլիւմա,  
Սարըլաբիլէյղիմ ինջէ բէլինա,  
Ղուլ օլմուշում բիր սուլթանա, սէվդիյեմ:

Սէօյլէմէմ իսմինի իւզում գիւլէյղի,  
Արա երդէ օլ էնգէլլէր էօլայղի,  
Բէնիմ սաղըզ եարըմ հալղէն բիլայղի,  
Կէչմէզ իղիմ բէն զիվանէ, սէվդիյիմ:

Այս որ լսեց իշխանը զարմացած, խոստովանեց թէ  
զուտանը բնածին բանաստեղծ է: Նոր-քեհան նրան զառ-  
նալով ասաց.—Արի թոյլ տուր, թող օրիորդի հետ մրց-  
ման մէջ մտնի և ես հաւատացած եմ, որ իշխանունին  
սրան կը կապէ:

—Այդպէս բան միթէ կարելի է, պատասխանեց իշ-  
խանը:

—Ի՞նչ նշանակութիւն ունի, երկուսը միասին կը  
մրցին, մենք սրան չենք յայտնել, թէ օրիորդը ձեր զուս-

տըրն է։ Սա կարող է կարծել, որ մի աղախին է, կամ նաժիշտ։

— Ինչպէս կամենաս, ասաց տատանւելով իշխանը, թող մըցեն և մենք լաւ կը զւարճանանք։

— Հովիւ, ասաց քեհան դառնալով գուսանին, մենք մի աղախին ունենք, որ շատ շնորհալի բանաստեղծ է, կարող ես նրա հետ մըցել։ Միայն թէ առաջ նա պիտի սկսէ հարց բարձրացնել։

— Ուրախութեամբ, ասաց ծպտեալ հովիւը, միայն այն պայմանով, որ եթէ ես յաղթւիմ, ինձ ստրուկ վերցնէ իշխանը, ես նրան գերի դառնամ և ցմահ նրա հօտերն արածեցնեմ, իսկ եթէ յաղթեմ, իշխանն ինձ շնորհէ այդ աղախին։

Պայմանը խիստ էր, բայց իշխանը այնքան հետաքրքրւեց, որ մըցումից չուզեց խուսափել։ Այդ ժամանակ Ղուկէյլի իշխանը մտաւ ապարանքը կանչեց աղջկան և ասաց.

— Մի հովւի հետ մըցման դուրս գալու համար, բամբուռ վերցուր ու դուրս արի։ Բայց պիտի տքնիս, որ չը յաղթւիս։ Մըցագինը շատ մեծ է, եթէ տարւիս, հովիւը քեզ մըցանակ է տանելու։ Այնպէս արա, որ ընկճես այս լեռնական հովւին, որին ուզում եմ գերել, հովիւներիս շարքը մտցնել և զլխաւոր հովիւ նշանակել։

Զէնչանը համաձայնեց, բամբուռ ձեռքին դուրս եկաւ և այս քառեակը երգեց։

Լսիր, երգիչ, խորհիր այս հարց,  
Ներքին վշտիցդ ինձ տուր համբաւ.

Ինչպէս դարձար դու երգասաց.

Յայտնիր ո՞վ է հոգուդ պաշտպան։



Թորքերէն

Աշը'գ, սանա դըր սուալըմ,  
Դէրդընդան խաբար իսթարըմ,  
Սէնի աշըգ քիմ էյլէդի,  
Փիրինդան խաբար իսթարըմ:

Ասման

Ծովն եմ խրւել գիշեր թէ զօր,  
Գլուխս ոտքիդ դրել իմ զոհ,  
Քառասունքն են ինձ միշտ պահապան,  
Քառասունքին ես կեանք պարտական:

Թորքերէն

Դէրեաեայ տալմշըմ դէրին,  
Սանայ ֆիդահ օլսուն սէրիմ,  
Բանա փիրիմդան սօրարսան,  
Օլ քըքլար դըր բէնիմ փիրիմ:

Ձենջան

Քնարիս ձայն ելէջաւոր,  
Բնութիւնն է պարզ, բանաւոր,  
Քառասունք անունն է ահաւոր,  
Աղբիւրի ակն ինձ դու ցոյց տուր:

Թորքերէն

Սազըմ սօյլէր փէրդէ փէրդէ,  
Իմթիհան օլուրըմ բու եէրդէ,

Քրքլարըն մէքեանի նէ՞րդէ,  
Սէնդէն բիր խաբէր իսթէրիմ:

Ասման

Քեզ տեսել եմ լոկ երազում,  
Բիւրակ լճի վաճառոցում,  
Քառսուն կոյսի վանք է հիմնած,  
Բարձր լեռան մոյգ ձորերում:

Թորքերէն

Սէնի գէօրդիւմ նազարըմդա,  
Բին-գէօլ դաղըն բազարընդա,  
Արազըմ փիրիմի բուլղըմ,  
Օլ դէրէնըն թէքքէսընդա,

Ձենջան

Երգիչն ողբում է իր վիճակ,  
Երգեր ցրւում վիճակ վիճակ,  
Ի՞նչ կայ քառսուն կոյսի ձեռքին,  
Երգիչ, լուր տո՛ւր պարզ ու տեղեակ:

Թորքերէն

Աշգլար քէնդի հալինդա,  
Սէօյլէնիր խալզըն դիլընդա,  
Նէ՞ վար դըր գըլար էլինդա,  
Սէնդէն բիր խաբէր իսթէրիմ:



Ասման

Մի գեղեցիկ ատեան տեսայ,  
Ձեռքս կրծկիս դրի կեցայ,  
Վեհ կոյսերի ձեռքին, կողքին,  
Գիրք ու վրձին միայն տեսայ:

Թորոֆերեն

Գուրուլու բիր դիվան գէօրդըմ,  
Դէսաղմի բաղլաղըմ դուրդըմ,  
Օլ գրբլարըն էլլէրինդա,  
Քիթաբ, դալամ, բոյա գէօրդըմ:

Ձենցան

Նստեց վիշապն ամպ նժոյգին,  
Հասաւ օգնել իր մանուկին,  
Բարձրից գրքերն՝ ո՞վ ցած բերեց,  
Կրթեց մարդու միտքն ու հոգին:

Թորոֆերեն

Խզըրի աթա բինդըրդի,  
Ղուլունա հարդըմ գէօնդարդի,  
Քիթաբլարի քի՞մ ինդիբդի,  
Սէնդէն բիր խաբար իսթէրեմ:

Ըսման

Մի ստեղծող մէկ աղբերակ,  
Որից ծագեց ամբողջ աշխարհք,

Լոյսը բերեց երկրում խաւար,  
Արեւստ, ուսում, գիր ու նկար:

Թորքերէն

Բիր դըր եարագան սահիբի,  
Զիւմլէմիզդէ Հագգա թաբի,  
Փիրիմդան բէն սուալ իթդըմ,  
Զիբրայիլ ինգիրդի քիթաբի:

Զեյնաի

Երգիչն ունի վիշտ զանազան,  
Կարիչ ձիաւորի նման,  
Ասում է ու անհետանում.  
Գաբրէլ քանի՞ փետուր ունի:

Թորքերէն

Աշգլար բօյլէ դէրդլի դըր,  
Սօյլէնիր, գիդար, աթլի դըր,  
Զիբրայիլ գաշ գանաթլի դըր,  
Սէնդէն բիր խաբէր իսթէրիմ:

Աման

Հառաչում եմ միշտ անդադար,  
Նեղ է գլխիս այս լայն աշխարհ,  
Ո՞վ չը պիտէ Գաբրէլն ունի.  
Երեք հարիւր վաթսուն փետուր:



Թորքերէն

Բէն գըլարմ ահ իլէ զար,  
Զիւնքի ջիհան բաշըմա տար,  
Զիբրայիլի քի սօրարսան,  
Իւշ իւզ ալթմըշ գանաղի վար,

Զէնջան

Կոյսերն հրին են սպասում,  
Դրախտում պարում, երգ են ասում,  
Կեանք են վարում, սէր են խօսում,....  
Փետուրն ունի քանի՞ կանգուն:

Թորքերէն

Մէլաիքլար նուր գէօղէղիր,  
Զէննէթ ալարա բէնղէղիր,  
Բիր գանաղ գա՞ն էնդաղէղիր,  
Սէնղէն բիր խաբէր իսթէրիմ:

Ասման

Թշւառ մանուկ սիրուց զրկւած,  
Թափառում եմ սէր կորցրած.  
Մի փետուրն է աշխարհ բռնած,  
Զափիր, որբան մեծ է կրակս....

Թորքերէն

Զիհանղէ գէղէրիմ բէօյլէ,  
Բանա եէրղէն, գէօյղէն սէօյլէ.

Բիր գանադ զիւնեայր տութար,  
Գուսուրուն սէն հէսաբ էյլէ:

Զեցան

Երգիչ հարցդ է կենդանի կեանք,  
Որ բռնած է համայն աշխարհք:  
Բայց ինձ ասա,— Գիտես՞ թէ բուն  
Ինչ է ուտում և օրն ուրբան:

Թորթերեւ

Աշըգ սէօզըն մէլայըգ զըր,  
Շիմտի րադբէթդէ փայըն զըր,  
Բայգուշ նէ՞ եէր, նէ՞ թային զըր,  
Սէնդէն բիր խաբար իսթէրիմ:

Էաման

Բաժին ունի ամեն օր բուն  
Երեք խեղճ ու տկար թռչուն,  
Որից մէկին պատառում է,  
Իսկ երկուսին էլ արձակում:

Թորթերեւ

Օնա իւշ գուշ թային գիդար,  
Բիրբիսի բաշ չէքեար գիդար,  
Էգէր բայդուշու սօրարսան,  
Բիրբինի եէր, իբիսին ազատ իղէր:



Զէնցան

Զէնջանիս սիրտն է միշտ վառւում,  
Սիրոյ բաժակն խմում այրւում,  
Իսկ այն ի՞նչ է, որ ամեն օր  
Պատւում է ինքն իր բոլորն:

Թորքերէն

Զէնջանըմ իւրէյեմ եանար,  
Աչք տօլուսըն իչէր եանար,  
Օ նէ՞ դըր քի հէր գիւն տէօնար,  
Սէնգան բիր խաբար իսթէրիմ:

Աման

Հովիւի թոքերն է միշտ վառւում,  
Սիրտս է ծակում, վէրքս է այրում:  
Ծծկեր մանուկն անգամ գիտէ,  
Փուշ աշխարհն է միշտ պտտւում:

Թորքերէն

Զօբանըմ շիգեարըմ եանար,  
Եիւրէյիմէ դէրզլար ինար.  
Օնի բիւմէյէ նէ՞ հաջէթ,  
Փանի գիւնեա հէր գիւն տէօնար:

Երեք օր, երեք գիշեր կերան խմեցին և իրար զէմ  
նստած ոգեցին, երգեցին ու նւագեցին: Ասմանը Զէնջա-  
նի բոլոր հարցերին պատասխան տւեց: Օրիորդը մի քանի

անգամ զաղտնապէս խոստովանեց իբեհն հօրը, թէ երգիչը  
անաժին բանաստեղծ է և դժւար է նրա հետ մրցել: Ապա  
երթը հասաւ Ասմանին հարցեր ուղղելու և նա ոգեց.

Ըաման

Ի՞նչ եռոտանի է, որ չունի հոգի,  
Մարդու ձեռքն է կերտել և դրել սարքի,  
Քառասուն թե ունի առանց երակի,  
Մնցնող, դարձող կանգնում է նրա սէյրին:

Թորքերէն

Օնէ դիր քի իւշ այազլի ջանը եօգ,  
Ուստա հափմիշ, քրք զօլու վար ջանը եօգ.  
Օ պինասը բէլ բիւքիւլմազ, մանի եօգ,  
Գէլան, գէչան սէյրան իտէր բունու բիլ:

Զէնցան

Եռոտանին կամուրջն է, որ չունի հոգի,  
Ճարտարապետ կերտել, դրել է սարքի.  
Քառասուն վտակներ նման երակի,  
Միանում են գետին գնում գէպի ծով:

Թաւրերէն

Օ քէօփրիւ տըր իւշ այազլի ջանը եօգ,  
Ուստա հափմիշ քրք զօլուվար, զանը եօգ,  
Օ բինասը բէլ բիւքիւլմազ, մանի եօգ,  
Գէլան, գէչան սէյրան իտէր, ալխաբէրի,



Աման

Ի՞նչ բարերար է, որ մարդ չի վստահիլ,  
եօթ ներքնայարկ ունի, յատակն չերկիր.  
Մակարդակն մարմարից չի զանազանիլ,  
Գիշեր ցերեկ խմում է արիւն, գտիր:

Օրիորդը մոլորեց, չը կարողացաւ ըմբռնել հանեկի միտքը և պատասխան տալ: Հանգիսականները խնցին, որ այդ հանելուկի բացատրութիւնը տայ և ներս միտ գտնւի դէպի օրիորդը:

— Շատ բարի, ասաց բանաստեղծը, այդ հանելուծովն է ցոյց տալիս, որ մարդկութեան բարերար բաւական է, բայց նրա ջրերին չի կարելի վստահիլ: Անյառ խոր անդունդները չեն երևում, մակարդակը փայլում է: մարի նման, բայց արիւն արբու զազանի պէս, իր բձրացրած փոթորիկներով ընեղմում է նաւեր և կուլ է լիս մարդն — մարդկային արիւնը: Ապա նորից քնարի բերին բաղխեց կտնտոցն ու ասաց.

Աման

Մին ի՞նչն է, բրի դէմ չեն կարող կուել  
Բերդեր, բուրգեր, լեռներ և ասպառաժներ,  
Երբէք մի վայրումնա չի կարող կանգնել,  
Այնքան հզօր է, որ թաքաւորներն  
Անգամ չեն յանդգնել նրան արգելել  
Որ չարշաւէ իրենց երկիրներն, գտիր...

Օրիորդը կաշկանդեց, լռեց: Ներսից մի սենեկաւ  
ասաց.

— Այ հովիւ, այս հանելուկդ էլ ինձ բաշխիր, բացատրիր: Հովիւ — երգիչը այդ հանելուկի բացատրութիւնն էլ ներեց և առաջ.

— Ո՞վ կարող է քամու դէմ կուել, նրա արշաւանքները խափանել: Այդ հանելուկը ևս ներեցի, բայց ասելիքս վերջինը կը լինի, որից յետոյ զրազս կը պահանջեմ:

### Աման

Այն բ՞նչ է, որ փետռած թևով է գնում,  
Խալխը ամբողջ նրան հասնում է, օգնում:  
Ամեն տարի կոխ է յայտարարում,  
Յաղթում, նւաճում նորանոր երկիր:

### Թորքերէն

Օ նէ դեր բի չէքմիշ գանատը գիտէր,  
Զիւմէ ասկէր օնա իմտատլար իղէր.  
Երլգա բիրդէմ գերեա իլէ ջէնգ իղէր,  
Դէրեայի ֆէթհ իղէր, բունու բիլ:

Այս էլ չը կարողացաւ օրիորդը բացատրել: Այս հանելուկը եփրատ գետին էր նմանացրել, որի վտակները գարնան հորդելով իրեն օգնութեան էին հասնում, ուժեղացնում, սրլնթաց Միջագետքը արշաւելուց յետոյ մըտնում է ծով և ամեն տարի ծովաբէրանում նորանոր գետիններ աւելացնելով ծովից նւաճումներ է կատարում:

Այդ ժամանակ Ղուլէլի իշխանն ասաց, թէ այս անգամ էլ ինձ բաշխիր:

— Ո՞չ, ասաց երգիչ հովիւը, ևս զրազ էի բռնել և երկնատուր շնորհով ևս յաղթեցի ու վաստկեցի, օրիորդն



իմս է սրանից յետոյ, ոչ որ նրան չի կարող ինձնից յա-  
փըշտակել:

Սրա վրա սաստիկ զայրացած, իշխանը հրամայեց  
անմիջապէս բռնել կապել հովիւ երգիչին և զահիճներին  
կանչելով հրամայեց զլխատել: Եւ որպէս զի իրեն անի-  
բաւ վճռից սիրտը չը բորբոքւի, իր աչքերը չը տեսնեն  
այդ հրէշային հրամանի գործադրութիւնը, իր ականջները  
չը լսեն թշուառ պատանու աղիոգորմ աղաղակները, իսկոյն  
ձի նստաւ իր նորիկ քհնայի հետ գնաց որսի:

Իշխանի հրամանի համաձայն զահիճը եկաւ, պատա-  
նու թեկերը թիկունքին շարեց, կապեց և սկսեց դանա-  
կը սրել, ու ասաց.

— Ինչ լանդիր որ ունիս, մահապարտ, ասա, որ կա-  
տարենք և ապա գլուխդ մարմնից բաժանենք:

— Խնդրում եմ, իմ թեկերս քանդէք, քնարս տաք, եր-  
կու քառեակ նւագելու թոյլտուութիւն անէք:

Մահապարտի վերջին ցանկութիւնը կատարւեց սովո-  
րութեան համաձայն, տւին քնարը և նա ասաց հետեւեալ  
քառեակները, որոնք լսում էր Զնջանը ներքնատան պատ-  
շգամբին նստած:

#### Աման

Աման, ով սիրելիս, եկայ ես քեզ մօտ,  
Հասիր, փրկիր գերուդ, ինձ վառեց կարօտդ.  
Դաժան հայրդ տքնեց ջնջել կեանքս արօտ,  
Բացատրելու համար եկայ ես քեզ մօտ:

#### Թորքերէն

Աման, սէվդիլիմ գեալդիմ եանընա,  
Հուլ էյլէ բէնի, աղատըն օլա,

Բաբան դառի էյլէդի ջիւան ջանըմա,  
Բիլդիրէյիմ սանա, խաբէրին օլսուն:

Այս որ լսեց օրիորդը մտածեց և անմիջապէս պա-  
տասխանեց.

Զեկցան

Միթէ սարին մեծցել ես, օտարական,  
Ինձ ծաղրելու իջել, հէյ, թափառական,  
Դալար վարդի կոկոնին ես ձեռք մեկնում,  
Միթէ չունե՞ս ամօթ, պատիւ, պատկառանք:

Թորքահերէն

Սէն դաղդան մի՞ ինզին, գեալդըն էջնէքի,  
Գիւզէլի սարմաք մի՞ իդի մուրադըն,  
Ասլա եօգ մի՞ օլ իւզիւնըն հիջաքի,  
Զօբան, դօնչէ գիւլէ էլըն ուզադդըն:

Աման

Գոռզս գետեղեցին լարւած աղեղում,  
Պառաւին, մատաղին մահը չի ջոկում.  
Հիմի կը գլխատեն կը քցեն գետում,  
Բաց ճաղերը, դուրս եկ, փրկիր սիրելուդ:

Թորքիլեն

Էջէլ երիմիշդիր օգուլու եայա,  
Էօլիւմ բազմադ իմիշ եօխսուլ աբայա.



Էօլդիւրիւրլար մէնի աթարլար չայա.  
Գալտըր շու փէրտէնի նազարն օլսուն:

Աւնջան

Հովիւ չափից ու սահմանից դուրս եկար,  
Լաւ իմացիր փրկութիւնդ է անհնար.  
Դու այդ մահւան արժանի ես, անպատկառ,  
Լեռներից վար իջար ծաղրելու համար:

Թորքերէն

Չօբան սէնին էթդիլարն փէք չոզ դըր,  
Ղաբիլ դէյիլ, ասլա դուրթուլիշ եօզ դըր,  
Սանա բու օլիւմ փէք միւսթահազ դըր,  
Բէնի սարմազ մի՞ նիյէթին, էյ չօբան:

Աման

Սիրելիս, Ամանդ է չոքել քո դրան,  
Արժանի չէ ոչ հռչակիդ, ոչ անւանդ.  
Ես գերիդ եմ, անմեղ արիւնս մի՞ թափել,  
Սիրտս ծակեց, լեզիս պատռեց, իմացիր:

Թորքերէն

Մէվդիյիմ, Ամանըն, գեալդի եանընա,  
Լայիլ դէյիլ դիր շու մէլէք շանընա,  
Մէն սէնին դուլունըմ, գիրմէ զանըմա,  
Բիլդիրէյիմ սանա, խաբէրին օլսուն:

### Զեկն

Ես Զէնջանն եմ, մաղս ես ինքս եմ սանդրում,  
Սիրոյ դաշոյնով սիրտ, թորս եմ կտրատում.  
Հովիւ ես քու հայրենիքդ եմ հարցնում,  
Ասա, ո՞ւմ որդին ես, ի՞նչ է քու անուն,

Թորքերէն

Զէնջանիլըմ բէն գիլիֆիմի տարարըմ,  
Ազգըն խանչարիլէ բաղըրըմ եարարըմ,  
Օղլան սէնին վաթանընը սօրարըմ.  
Խաբար վէր բիմ դըր սէնին փէդէրըն,

Շաման

Հայրենիքս անուշ երիզ աւանն է,  
Դու հրճւանքի մէջ ես, հոգիս հիւանդ է,  
Ասմանիդ նշանն էլ մի շողակ գարդ է,  
Էլ ինձ հարկաւոր չէ, ետ առ, քեզ պահէ...

Թորքերէն

Վաթանըմ էրգինգեան շէհէրի խօշտուր,  
Սէն սէֆադա, բէն զաֆէսդա բիր զուշ տուր,  
Ասման նշանի ջէվահիր թաշ դըր,  
